

վայսկիյ հարկաւոր է համարում զսպել անդլիա-
ցիներին, որոնք աշխարհի բոլոր կողմերում
խառնակութիւններ են գցում: Եւ նա ասում է.
«Եթէ անդլիացիները սէր ունենային կռիւ սկսել
օսմանեան պետութեան դէմ քրիստոնեաներին
աղաատելու համար, եւ նրանց կասէի. չնորհ ա-
րէք, կուեցէք և աղաատեցէք. ուզում էք ստեղ-
ծել ազատ, անկախ Հայաստան,—ստեղծեցէք,
և երբ դուք աղոթութիւն կունենաք այդ բանի
մէջ՝ եւ զեռ կաշխատեմ ուժեղացնել այդ Հա-
յաստանը, այնտեղ գաղութացնելով մեր սահման-
ներում ապրող հայերին. թող ապրեն միա-
սին և բարօրութիւն վայելեն:—Այս խօսքերը
նուա պահպանողականը գործ է ածում ոչ թէ
դրոված որ և է անկեղծ զգացմունքից, այլ լոկ
այն պատճառով, որ նա գիտէ թէ Անգլիան չի
կռիւ թիւրքիայի դէմ, քանի որ թիւրքիան Անգ-
լիայից դժուր է:

Այո, այդպէս են պատմութիւնը գրում Իւ-
վայսկիները: Ինչ արած:

ՆԱՄԱԿ ԲԱՆՈՒԻՑ

Փետրվարի 22-ին

Փետրվարի 20-ին հասարակաց ժողովարանի
դահլիճում տեղի ունեցաւ սովորական «Հայկա-
կան երեկոյթը», յօգուտ «Մարդասիրական ըն-
կերութեան» գրադարան-ընթերցարանի: Տարի-
ներից ի վեր, սարքերաբար, ամեն տարի շա-
րունակ, այդ «Երեկոյթը» տեղի է ունենում,
սակայն այն զգալի տարբերութեամբ, որ տարի-
ներ առաջ նոյն «Երեկոյթը» տալիս էր մօտը
1000—1500 բուրջուց ոչ աւելի, իսկ այսօր մի
քանի հազարներ: Առաջ «Երեկոյթը» մարդիկ չէր
գրաւում, չէր հետաքրքրում, որովհետեւ հետա-
քրքիր դարձնելու համար հող չէր տանում,
որպէս թէ «իզուր ծախքեր չանելու համար»...
Բայց այսօր լուրջ ուշադրութիւն է դարձնում,
չաբաթներով պատրաստութիւններ են տեսնու-
վում, հազարից աւելի ծախքեր են անում, որով
և հասարակութեան են զուարճութիւն պատճա-
ռում, և հազարներով զուտ արդիւնք ստանում:
Արդիւնքի կողմից այս տարվայ «Երեկոյթը» չը
տեսնված աշողութիւն ունեցան: Ընդհանուր
մուտք եղաւ 5,880 բուրջի, որից մօտ 2000 բու-
րջուտանկերից, իսկ 3880 բուրջի ծաղիկներ, ժե-
տօններ, զանազան իրեղէններ և շամպայն վա-
ճառուց: Այդ 5880 բուրջուց դուրս հանելով
մօտ 1500 բուրջի ծախքը, զուտ արդիւնք կը
մնայ գրադարան-ընթերցարանի օգտին 4380—
4500 բուրջի: Բայց ոչ թէ 4000—5000 բուրջ
անպայման աւելի՝ 8—10,000 բուրջ: հեշտութեամբ
կարելի կը լինէր ստանալ, եթէ տեղ լինէր և
հնարաւորութիւն ունենային բոլոր ցանկացող-
ներին ընդունել, թէկու՞ղ զբաղի՞մ մտնելու:
տոմսակներ տալ: Երեկոյթից երկու օր առաջ
տոմսակները յանձնել էին մի յայտնի խանութ՝
վաճառելու համար: Առաւօտեան ժամի 11-ին
յանձնում են տոմսակները, ժամի 2-ին այլ ևս
մի տոմսակ չէր մնացել... Երեք ժամվայ ըն-
թացում արդէն բոլոր տոմսակները ծախված
էին: Ընդհանուր դժգոհութիւնը և անբաւական-
ութիւնը՝ տոմսակներ չը գտնելու համար հաս-
նում էին նոյն իսկ չափազանցութեան... Երեկո-
յեան «Երեկոյթից» մի քանի ժամ առաջ հա-
րիւրաւոր մարդիկ ժողովված՝ տոմսակներ են պա-
հանում. նրանք կամենում են անպատճառ ներ-
կայ լինել՝ մանկ զանի՞մ, թէկու՞ղ ինչ գնելով էլ
որ լինի. իսկ զանի՞մում, վերայաբերում ոչ մի-
այն նստելու—այլ և կանգնելու տեղ չէր մնա-
ցել... Թերեւս լուրջ անբաւականութիւններ
ծագէին, եթէ ոստիկանապետ ինքն անձամբ չը
միջամտէր...

«Հայկական» անուն կրող երեկոյթը բոլոր-
ապագայի կողմից, պէտք է խոստովանել, շատ
էլ աջող չէր. գլխաւոր անաշողութիւնը «հայ-
կական կեանքը» պատկերացնող տեսարանների
և բնորոշ գծերի բացակայութիւնն էր: Հայկառակ
կարգադրիչների և երեկոյթի մասնակցողների
մեծամասնութեան ցանկութեան, զանազան պատ-
ճառաբանութիւններով դուրս գցվելիք ծրագրից
շատ նստալուսկայարմար տեսարաններ և պատկեր-
ներ՝ ժողովրդական-պատմական կեանքից: Մի քա-
նի հոգի այդպէս յարմար համարեցին և այդպէս էլ
արին ի խաչատուրութիւն մասնակցողների մե-
ծամասնութեան...

«Երեկոյթին» մասնակցում էր և յայտնի երգ-
չուհի օր. Պապայանը, որ յատուկ հրաւերով

յանձն էր առել առանց վարձատրութեան մաս-
նակցելու: Տաղանդաւոր երգչուհուն տրվեց ծաղ-
կէ մի գեղեցիկ փունջ՝ «Մարդասիրական ընկե-
րութեան կողմից»: Երեկոյթին պիտի մասնակ-
ցէր և թիֆլիսի օպերային խմբի երգիչ պ. Պե-
րես, որը սակայն, հիւանդութեան պատճառով,
չը կարողացաւ կատարել իր խոստումը: «Երե-
կոյթի» ծրագրերը այդպիսով սահմանափակվեց և
մնաց մի հայերէն վոքալի, որ ներկայացրին
սիրողները միջակ կերպով, մի քանի կենդանի
պատկերներ, որ անցան բաւական աջող և տե-
ղական ու եւրօպական պարեր, որոնք չարունակ-
վեցին մինչև առաւօտեան 6 ժամը: Երեկոյթի
կարգադրիչները՝ տիկիններ Սօֆիա Աղա-
մանց, Մարիամ Թադևոսեան և Հեղինէ Աղա-
մանց—իրանց սիրալիր հիւրընկալութիւնը կա-
տարեալ դարձնելու համար՝ հիւրասիրում էին
հասարակութիւնը պաղպաղակով և զանազան
քաղցրաւէիքներով:

Մտադրութիւն կայ շատ մօտիկ ապագայում
կայացնել մի բազմաբաղկան «երեկոյթ» յո-
գուտ հայ գաղթականների:

Ն. Դաւթեան

ՆԱՄԱԿ ԱԼԵԿՍԱՆԴՐՈՊՈԼԻՑ

Փետրվարի 19-ին

Փետրվարի 18-ին քաղաքային կլուբի դահլի-
ճում կայացաւ հայոց Բարեգործական ընկերու-
թեան տեղական ճիւղի պարահանդէսը, որն իր
նիւթական օգուտով գերազանցեց ընկերութեան
մինչև այսօր կազմակերպած բոլոր երեկոյթները:
Ցուցակներ ծախված էին մօտ 200 բուրջու, որ,
մեր կարծիքով, շատ չէ. բուժիչից ստացվեց
600 բուրջի, որ համեմատած ներկայ հանգա-
մանքների հետ՝ կարելի է բաւարար համարել.
հետևապէս պարահանդէսը ընդհանուր մուտք ու-
նեցաւ 800 բուրջի, իսկ ծախքը, չնորհիւ կատար-
ված խնայողութիւնների՝ հազիւ 100 բուրջու կը
հասնի:

Գալով պարահանդէսի գեղարուեստական մա-
սին, պէտք է նկատել, որ նա մի առանձին
տարբերութիւն չունէր սովորական պարերե-
կոյթներից: Բարեգործական ընկերութեան վար-
չութիւնը, սրանցի մի երկու ամիս առաջ ժողո-
վրդական երգերի և պարերի առանձին պատ-
րաստութիւններ էր տեսնում: Հաւաքվում և
պարում էին մինչև իսկ օրիորդներ և տիկիններ,
բայց վերջը պարահանդէսը կայացաւ առանց
այդ գեղեցիկ երգերի և պարերի, զրկելով հան-
դիսականների մեծամասնութիւնը՝ ժողովրդի
սրտից զրկած զգացմունքների և հառաչանքների
ձայները լսելու զուարճութիւնից: Մեր կարծի-
քով, լսւ էլ լինէր, եթէ ընկերութեան պարա-
հանդէսը իր նիւթական օգուտի հետ՝ միացնէր
նաև մի շարք պարերգերի երևան հանելը, որոնք
այնքան մեծ տեղ են բռնելու մեր ժողովրդական
բանաստեղծութեան մէջ: Մենք առանձնապէս
կանգ չէինք առնի այս վերջին կէտի վրա, եթէ
լսած չը լինէինք յիշեալ պարերգերը կրկնու-
կասի ուրիշ քաղաքներում նրանց կատարած ա-
հագին դերը: Գիշերվայ ժամը 9-ից սկսած մինչև
առաւօտեան ժամը 4-ը եւրօպական և տեղական
պարերը չարունակ յաջորդում էին իրար, գրա-
ւելով պարողների ահագին բազմութիւն:

Պարահանդէսի աղոթութեան առանձնապէս նը-
պաստեցին՝ չնորհալսութեան արժանի տիկին
Գուրգենիձէ, օր. օր. Օլ. Տէր-Անդրեասեան.
Եր. Ձիթողեան, Շ. Դրամբեան, Վ. Վարդապետ-
րիկեան, վարչութեան նախագահ Գ. Տէր-Պետ-
րոսեան, Կ. Խաչատրեան, Պ. Ձիթողեան և վար-
չութեան բոլոր անդամները, որոնք յանձն էին
առել բուժիչի միջոցով գործ ունենալ մեր
հարուստների սրտերի հետ, որոնց դուները առ-
հասարակ շատ դժուարութեամբ են բացվում...
Ընդհանրապէս պարահանդէսը անցաւ կեն-
դանի, ուրախ և հանդիսականները ժամը 4-ին
մօտ ցրվեցան լաւ տրամադրութեան տակ: Յոյս
ունենք, որ Բարեգործական ընկերութեան ճիւ-
ղը խրախուսելով իր այս աշողութիւնից, կաշ-
խատի նոյնօրինակ գործերով օր առաջ բաւել
իր վրա բարելւած հին մեղքերը, որոնց մտա-
բերելն անգամ շատ ծանր է:

Պ. Մ.

ՆԱՄԱԿ ԱՐԴԱՆԻՑ

Փետրվարի 9-ին

Մի չաբաթից աւելի է, որ տեղական իշխանու-
թիւնը յայտարարեց քաղաքի բոլոր քանկիչնե-
րին Բարձրագոյն թոյլտուութեան մասին, որով
կարելի է ստորագրութիւն բանալ յօգուտ հայ
հանում իր լուծման չէ տուել: Թէև Արդահանի
ժողովրդին մի քանի պատճառներով կարելի է
տեսնուած բոլորովին քաղաքված համարել,
սակայն ի նկատի ունենալով համակրելի նպա-
տալը, չէ կարելի այդ անտարբերութիւնը ար-
դարացնել, որովհետեւ որքան էլ նիւթապէս քալ-
քայված լինեն, էլի կարող են իրանց կարողու-
թեան համեմատ օգնութեան հասնել խեղճերին:
Արդահանի հայ կանանց և օրիորդների շրջա-
նում կան այնպիսիները, որոնք եթէ բարեհա-
ձէին չը զլանալ ձեռք դարկելու այս բարի գոր-
ծին, մեծ աշողութեամբ առաջ կարող են տա-
նել օգնութեան խնդիրը: Միթէ ամօթ է կնոջ
համար օգնութիւն խնդրել, գոնէ իր շրջանում,
մերկ և անօթի մայրերի և քոյրերի համար, ո-
րոնք թիւրքաց սրից ու կոտորածից ազատվե-
լուց յետոյ՝ մեր անտարբերութեան պատճառով
կարող են մեր աչքի առաջ բաղցածութիւնից և
ցրտից կոտորվել: Ուրախութեամբ լսում ենք,
որ սիրողների խումբը արդէն թոյլտուութիւն է
ստացել ներկայացում տալ փետրվարի 21-ին
ուսումնարանի դահլիճում, այս բարի նպատա-
կով: Եւ ունենք, որ Արդահանի ժողովուրդը
մեծ սիրով կը վերաբերվի այդ ներկայացման
Սիրողների խմբի մէջ գտնվում են մի տիկին և
մի օրիորդ: Գոնէ միւս տիկինները և օրիորդները
օրինակ վերցնեն նրանցից և իրանք էլ կանանց
շրջանում հանգանակութիւն բաց անեն գաղթա-
կանների օգտին:

Յ. Գ.

ՆԱՄԱԿ ԳՈՐԴՈՒՅ

Փետրվարի 10-ին

Համարեն օր չէ անցնում, որ հայ գաղթական-
ները չը պատեն մեր աւանի փողոցները ողոր-
մութիւն խնդրելով: Գծադրները հազիւ են
ծածկում ցնցոտիներով իրանց մերկութիւնը,
իսկ մարմինները բոլորովին կապտած է ցրտից
և Սրանց օգնող չը կայ. հարուստ վաճառականը
խորատուցված է իր հաշիւների մէջ. նոր տար-
վայ առիթով նա ուզում է իմանալ իր օգուտն ու
վնասը: Ունեւոր հայ աստիճանաւորը ճոխ սեղան
է պատրաստում բարիկենդանի համար. սրանք
զբաղված են, սրանք ժամանակ չունեն և իսկի-
չեն էլ ունենալու հայ գաղթականին մտաբերե-
լու: Օգնողը միայն միջին դասակարգն է, որը իր
ունեցածից բաժին է տալիս թշուառ հայրենակ-
ցին ու ճանապարհ գցում:

Ահա պ. Զաւառապետը, որ վաղուց յայտնել
էր գաղթականների օգտին փող հաւաքելու մա-
սին, տեսնելով որ հայ ունեւորը՝ թէ վաճառա-
կան, թէ աստիճանաւոր, իրանց կամքով չեն
ուզում օգնել թշուառ եղբայրներին, այսօր ա-
ռաջարկեց բոլորին՝ առանց յետաձգելու՝ ստո-
րագրել մի խոշոր գումար կարօտեալների օգ-
տին: Պ. Զաւառապետի վարմունքը համակրելի է:
Դիտող

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԱՆ

Երևան, փետրվարի 3-ին

Պ. Յովհաննիսեանը մի բանում ևս սխալվում
է գրելով, թէ վարչութիւնը, բացի տիկին Տէր-
Մկրտչեանից, հրաժարվել էր կարող, որովհետեւ
նրանք դուրս եկած էին հաշուում: Նախ՝ մենք
ընտրված ենք մայիսի 19-ի ընդհանուր ժողո-
վում և հաստատված ենք խորհրդից յուլիսի 12-ի
օրոյում: Ն 170 դրութեամբ. Բարեգործա-
կան ընկերութեան հրահանգի 4 յօդուածով
«տեղական վարչութեան նախագահի և անդա-
մների ծառայութեան ժամանակը երկու տարով
է», ուրեմն մենք իրաւունք ունենք մնալու
մեր պաշտօնում մինչև 1893 թ. մայիսի 19-ը
կամ յուլիսի 12-ը: Եթէ միաձեռութեամբ չը
խախտելու համար ընտրութիւն առաջարկելու
լինէինք տարվայ վերջին, ինչպէս և թեւադրում
է նոյն յօդուածը, այդ պէտք է լինէր ներկայ
1897 թ. վերջին, բայց եթէ մինչև անգամ գոր-
ծադրէինք նոյն այդ յօդուածի երկրորդ մասը և

ծանօթութիւնը, որտեղ ասված է «իւրաքանչիւր
տարվայ վերջը տեղական վարչութեան անդա-
մների կէսը հերթով (կամ վիճակով) հեռանում
են»։ այդ ժամանակն էլ ներկայ (ընկերութեան
22-ի) ընտրութեանը մեղանից միմիայն եր-
կուսը պիտի դուրս գային. նախագահը և
երկու միւս անդամները պիտի մնային իրանց
պաշտօնում և ոչ մի Յովհաննիսեան, ոչ մի
ընդհանուր ժողով իրաւունք չունէր այդ կանոնը
փոխելու, եթէ մեր ցանկութիւնը չը լինէր հրա-
ժարվելու: Բայց գուցէ մեզ հարցնէք, պ. Յով-
հաննիսեան, թէ ինչու ձեր այդ առաջարկու-
թիւնը անելիս մենք ոչինչ չստացինք ժողովին,
եթէ յիշում էք, այդտեղ մեղանից պ. Տէր-Մար-
տիրոսեան յայտնեց, թէ վարչութիւնը չէ ուզում
ծառայել, արձակեցէք նրան, ինչ մօտիվ ուղում
էր դրեցէ՞ք: Բայց ինչու համաձայնեցիք նորից
քուէարկվել, գուցէ նորից հարցնէք.—նախ՝ այն
պատճառով, որ ձեր ղեկավարութեամբ չը ղե-
կավարվող անձինք առանձնակի սնդուած էին, որ
մենք համաձայնվեցէք քուէարկվել. երկրորդ՝
մենք պարզ տեսնեց ձեր բռնած թշուառական
դիրքը, մանաւանդ վարչութեանը ուղղած ձեր
խիստ հարցը, յիշելով, թէ թիւու ընտրութիւն
չենք նշանակում, և երրորդ՝ պարզ տեսնելով
ձեր ջիւղը ցանկութիւնը ընտրվելու, զրեցինք
մեր քուէն, որպէս զի դուք չանցնէք: Այս բանը
մեզ աղողկեց, որի պատճառով էլ այսօր հրա-
պարակ էք եկել մեզ մրտնդութիւն:

Պ. Յովհաննիսեանն ասում է, թէ ինքը և զույ-
րոցական գործով հետաքրքրվող անձինք շատ էլ
գոհ չէին լինի վարչութեան եռանդից և բարե-
սրտութիւնից, որովհետեւ միշտ թեմական դպրո-
ցի աշակերտները հազուադէպ են ստացել վարչու-
թիւնից, իսկ այս ասարի, Ռեմիլի 20 աստի-
ճան ցրտի տակ, նրանք ցնցոտիներ հազած էին
յաճախում դպրոց: 1) վարչութիւնը ղեկավար-
վում է ընդհանուր ժողովից տրված նախահաշուով:
Նախահաշից դուրս, ամբողջ ոյժը կենտրոնաց-
նել միմիայն թեմական դպրոցի չքաւոր աշա-
կերտների վրա՝ չէր կարող: 2) վարչութիւնը չէ
կարող բոլոր 545 աշակերտների վրա խնամը
տանել և հնարաւորութիւն էլ չունի տանելու:
մանաւանդ որ նրանց վրա հոգալու համար կոչ-
ված են տեսուչը, հոգաբարձուները և նախագա-
հը, որոնց պարտականութիւնն է այդ ու մի-
ւրոց էլ ունեն անելու: վարչութիւնը պարտա-
կան է գործադրելու աշակերտների վրա նրանց
յատկացրած գումարը այնպէս, ինչպէս ինքը
խելացի կը համարի: Ուրեմն պ. Յովհաննիսեան-
ցի ցանկութիւնը և թեւադրութիւնը՝ միմիայն
մտածել դպրոցի աշակերտների վրա, մոռանա-
լով մերկ, քաղցած, վիրաւորված, հիւանդ և ա-
մեն բանից զրկված գաղթականներին, որոնց
մէջ նոյն իսկ թեմական դպրոցի ցնցոտիների
մէջ գտնվող աշակերտներից աւելի զժաղիչները
կան, թողնելով քաղաքի չքաւորներին, որոնք ոչ
թէ հազուադէպ չունեն, այլ նոյն իսկ փայտ չու-
նեն տաքանալու և օրերով քաղցած են մնում,
վարչութիւնն անել չէր կարող:

Այժմ դիմելով փաստերին և թանչանքներին՝
տեսնենք թէ մենք կատարելով նախահաշուի
բոլոր կէտերը, որքան զատապարտելի ենք վե-
րաբերվել ղէպի թեմական դպրոցի աշակերտ-
ները և անցեալ տարիների հետ համեմատած
որքան սակաւ ենք հասցրել օգնութիւն: Երևանի
ճիւղի բացվելու տարւանից—1889 թ.—վար-
չութիւնը ուսումնառուների վրա ընդհանրապէս
և թեմական դպրոցի վրա առանձնապէս հետե-
ւեալ ծախքերն է արել. 1889 թ. ուսումնառուներ
րին 250 բուրջ, որից թեմական դպրոցի աշակերտ-
ներին 150 բուրջ, 1890 թ. 236—120 բուրջ, 1891 թ.
160—100 բուրջ, 1892 թ. 260—120 բուրջ, 1893 թ. 450—
250 բուրջ, 1894 թ. 450—300 բուրջ, և 1895 ամենաուսա-
թ. 753—365 բուրջ. այն ինչ անցեալ 1896
թ., ինչպէս վերեւումն էլ յիշեցինք, բոլոր ու-
սումնառուների վրա ծախսել ենք 961 բուրջ
4օպէկ, որից նորից դպրոցի աշակերտներին
տրված է 50 բուրջ, և երեք ուսանողների՝ 70 բուրջ
մնացած 841 բուրջ 4օպէկ: Ծախսվել է միմիայն թե-
մական դպրոցի աշակերտներին վրա 2ը մոտա-
նապէս ամենք իրաւունք ունենք իրաւունք
միայն 600 բուրջ: Ուրեմն 1896 թ. վերջին, ոչ թէ բոլոր
տարիներից շատ է ծախսել չքաւոր աշակերտ-
ների վրա, այլ նոյն իսկ բոլոր տարիների և
բոլոր ուսումնառուների վրա ծախսածից էլ ա-
ռատ է տրվել թեմական դպրոցին:

Այժմ տեսնենք աշակերտների օգնութեան

ձեռք 14 հոգի ստացել են և այժմ էլ ստանում են ամսական 5 և 6 ռուբլի նպաստ. եթէ այդ թոշակը նրանցից կտրվէր, նրանք պէտք է զըրկվէին ուսումից և վերադառնային իրանց անհրաժեշտ նրանցից 3-ը թիրաքահայ գաղթականներին են, 1-ը վարստանի գիւղերին է, 2-ը Ղարաբաղից, իսկ մնացածներն էլ գաւառի փակված ծխական դպրոցներից կամ դպրոցի հին աշակերտներից. 7 հոգի որդեգիրներ են, որոնք ստանում են ուսման թոշակ և հագուստի փող (80 ռ.), իսկ 23 հոգի ստացել են 5, 6, 8 և 15 ռ. միանուագ նպաստ: Այդ բոլոր աշակերտների չքաւորութեան և առաջդիմութեան մասին մենք մեր ձեռքին ունենք, նոյն իսկ իրանի ա. Գովհաննիսեանի, որպէս տեսչի, անցեալ և ներկայ տարվայ պաշտօնական վկայագրերը և դպրոցի հոգաբարձութեան անցեալ տարվայ № 13 գրութիւնը և մասամբ էլ ձանաչել ենք մենք անձամբ: Այժմ հարցնում ենք, որն է աւելի նպատակաւոր, 21 աշակերտի թոշակ տալ, որպէս զի նրանք չը զրկվին ուսումից, թէ՛ դրանց զըրկել ուսումից մի քանի հոգու հագուստ տալու համար: Չենք կարծում, թէ ինքը պ. Գովհաննիսեանն իսկ գործողներ իր այդ թելադրութիւնը, եթէ յաջողէր վարչութեան անդամ ընտրվել:

(Կը չարունակվի)

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կ. Պօլսի լրագիրները այս օրերս միայն տպագրելով մի պաշտօնական յայտարարութիւն այն մասին, որ թիւրքաց կառավարութիւնը վճռեց 2,000 զրույ թոշակ յատկացնել նախկին պատերազմ իշխմանը: Որեւի մինչև այժմ այդ թոշակը չէր տրվում: Թիւրքաց օրէնքով, ամեն մի պատերազմ, իր պաշտօնից հեռանալուց յետոյ, որոշ ամսական պէտք է ստանայ: Բայց ինչպէս երևում է, այդ օրէնքը չէր տարածվում իշխմանի վրա, և այդ պատճառով, ինչպէս հաղորդել էր Երուսաղէմի մեր թղթակիցը, իգմիրեան նիւթական մեծ նեղութիւններ է կրում: Հաւատանք արդեօք, որ թիւրքաց կառավարութիւնը կը կատարէ իր խոստումը, և կը վճարի որոշած ամսականը: Գիտարանում ենք հաւատալ:

Սուվօրին չէ հանգստանում, պետութեան ծայրերում ապրող օտար ցեղերը կտրել են նրա ջուրը: Անցեալ օրերը նա մի ահագին վայնասուն էր բարձրացրել այն բանի դէմ, որ թիֆլիսում գինի վաճառողները հայեր են: Իսկ այսօր նա փարիսեցիական վշտով հասկացնել է ուղում, որ եթէ իր օտարակերութեան տենչանքները մնում են դատարի ձայնը տարածութեան մէջ, դրա պատճառն այն է, որ Պետերբուրգն էլ, Ռուսաստանի մայրաքաղաքը, պետութեան սիրտը չէ, այլ մի ծայրը, ուստի և առանձին համակարանք է տաժում դէպի ծայրերը: Բանից դուրս է դալիս, որ նոյն իսկ Պետերբուրգն էլ, նոյն իսկ Ռուսաստանի մայրաքաղաքն էլ Սուվօրինի չափ հասկացողութիւն չունի պետութեան ընդհանուր շահերի մասին: Ergo—Սուվօրին անուղղական հայրենասեր է: Տեսնենք ձեր կանգ կառնեն ուսում մի քանի ցնդված հրապարակախօսների զառանցանքները:

Մեզ հաղորդում են, որ Հրատարակչական ընկերութիւնը վճռել է հրատարակել ժամանակակից մասին մի հանրամատչելի բրոշյուր, ժողովրդի մէջ տարածելու համար: Մենք խորհուրդ կը տալինք այդ բրոշյուրը ձեր տարածել:

ԷՊՍՄԱՆՆԻՑ մեզ հաղորդում են հետեւեալ ղեկը: Փետրվարի 15-ին խորհրդի եպիսկոպոս Ստեփանէ ծառային յանձնում է 255 ռուբլի պատու գնելու, յանուն նախկին պատերազմ իշխման սրբազանի: Մասնա վերցնելով այդ 255 ռուբլին և եպիսկոպոսի անուանական կնիքը, պատու է գնում. սակայն անցնում է մի քանի ժամ և ծառան չէ երևում: Մարդ է ուղարկվում պատաստունը տեղեկանալու, այնտեղ յայտնում են, որ իրանց ոչինչ յայտնի չէ այդ մասին և այդ հասցեով դրամ ընդունված չէ այդ օրը: Ամիջապէս մարդ է ուղարկվում Երևան՝ պատալին կայարանը. այնտեղի մատենանից իմացվում է, որ այդ մի և նոյն ծառան (Պետրոս Թակոբեան, վանեցի) կէս ժամ չը կայ, որ սահնակ է վարձել նոյն կայարանից մինչև Սեւեանով:

Կա կայարանը: Իսկոյն տեղեկացնում է վարչապետի գաւառագետին, վերջինը հեռագրում է Կիլիկիան, Աղստաֆա և այլն: Փետրվարի 16-ին, երեկոյան, Աղստաֆայի տեղական ժամդարմից ստացվում է հեռագիր, թէ արդէն ծառան բռնված և փողը յանձնված է Ղազարի պրիստաւին: Գործը յանձնված է վարչապետի քննիչին:

ԳՐՈՐԻՑ մեզ գրում են, Փետրվարի 14-ին, հասարակաց ակումբի դահլիճում, յօգուտ հայոց Բարեգործական ընկերութեան տեղական ձեռքի, սիրողները՝ մասնակցութեամբ դերասան Արաքսեանի տունի մի ներկայացում: Խաղացին հայերէն «Պէպօ» և վրացերէն մի վոդևիլ: Ներկայացումը անցաւ աշուղ. պ. Արաքսեանը Պէպօի դերում արծառնացաւ հասարակութեան բաւական ծափահարութեան: Հնորակայութեան բարձր են յատկապէս օր. օր. Վ. Խիթարեան, Ե. Բաբայան և Ջազուհեան, որոնք արհամարհելով գաւառական լասեկօսները քաջութիւն, ունեցան բեմ դուրս գալու: Ուրախակ էր տեսնել, թէ ինչպէս վրացի սիրողները մասնակցում էին Բարեգործական ընկերութեան օգտին արվող ներկայացման: Ընդհանուր մուտքը 180 ռ. էր. դուրս արդենք մնաց 130 ռուբլի:

ՂԱԼԱՐԻՑ մեզ գրում են, Փետրվարի 14-ին, արական դպրոցի դահլիճում, չորսիւ մի քանի երիտասարդների, յօգուտ հայ գաղթականների արվեց մի երեկոյի, որը բաղկացած էր հետեւեալ մասերից. խմբական երգեցողութիւն հայոց և ուսաց լեզուներով, solo երգեցողութիւն ուսաց և ֆրանսերէն լեզուներով, նուագումն ջութակի և դաշնամուրի վրա, և վերջ էլ պարեր: Երգերից և նուագումներից ժողովուրդը մնաց չառ գոհ: Մուտք եղաւ 365 ռուբլի, ծախս՝ 105 ռուբլի:—Ջուր արդենք մնաց 260 ռուբլի, որը համաձայն կառավարչապետի կարգադրութեան, պիտի յանձնվի ոստիկանութեան, հասցնելու թիֆլիս:

ԱԼԷՔՍԱՆԴՐՈՊՈԼԻՑ մեզ գրում են փետրվարի 19-ից. Վերանակը փոքր առ փոքր տաքանում է, սակայն բացօթեայ աշխատանքները դեռ չեն սկսված: Գաղթականների օգտին ուղարկած շրթերը բաժանվեցին, բայց չառեցին դեռ մերկ են, և մեծ պահանջ կայ օգնութեան:

ԷՊՍՄԱՆՆԻՑ մեզ գրում են, Գէորգ Ռչտունի, Թովմա Բաղդասարեան և Կորին Սահակեան օտարահպատակ վարդապետները Բարձրագոյն հրամանով ընդունված են ուսումնական:

ԳԱՆՁԱԿԻՑ մեզ գրում են, Փետրվարի 22-ին կայացաւ այստեղ սիրողների ներկայացում, մասնակցութեամբ թիֆլիսի դերասանական խումբի անդամներ պ. պ. Պետրոսեանի և Յարութիւնեանի: Խաղացին վարդապետն ամենի առիթով «Արշակ Բ.» և վերը «Եղիշ-Կըր» վոդևիլը: Ներկայացման ղեկավարները ոչ մի միջոց չէին խնայել հետաքրքիր դարձնելու նրան. թէ հագուստների և թէ արտաքին ուրիշ սարք ու կարգի մէջ մեծ ճաշակ էր երևում: Պ. Պետրոսեանի զգացված խաղը Արշակի դերում ազդու տպաւորութիւն գործեց հասարակութեան վրա, որը մի քանի անգամ դուրս կանչեց չորսալի դերասանին բեմ ու վարձարեց նրան բուռն ծափահարութիւններով: Միջոցներն այս անգամ էլ ցոյց տուին, որ գիտեն բարեխղճաբար վերաբերվել իրանց յանձն առած պարտաւորութիւններին. ներքաշակութիւնը մինչև վերջը չը խանգարվեց: Նրանցից առանձնապէս աչքի էին ընկնում պ. պ. Վ. Մակարեան, Գ. Գանիշեան, Ն. Թերզիբեան, Լ. Տէր-Աղաբեան, Լ. Ճգնաւորեան, Խիթարեան և Լ. Մէլքեան: Մնացեալներն, վերջինս թուրք Աղա-Մուրադի դերում անմասն էր: Գաղթից կատարելապէս լի էր. շատերին չաջողվեց մինչև անգամ տոմսակ գտնել, ուս մի շատ հազաւորներ երեկոյ է Գանիշեան, դր ատաղ հասարակական այդպիսի օգտակար գումարները պահանջ կարծէք չէր զգացվում բոլորովին: Անտրակտներին ածու էր յայտնի աչքը Ֆարսան իր խմբով. նրա տխուր երգերը շատ էին համապատասխանում ներկայացման տխուր բովանդակութեան:

ՆԵՐՔԻՆ մեզ հաղորդում են հետեւեալ լուրերը: Փետրվարի 13-ին քաղաքային կլոպի դահլիճում տեղի ունեցաւ մի պարահանդէս թեմական դպրոցի օգտին: 300 ռուբլի դուրս արդենք մնաց, որ է հարկէ չառ քիչ է համեմատելով առաջինը եղած եկամուտի հետ: Ամսիս 19-ին տեղական սիրողների խումբը խաղաց «Պէպօ» և «Օրթաճալի բէֆը» Բարեգործական ընկերութեան ձեռքի օգտին. ներկայացումը անցաւ շատ լաւ. խաղացողները մեծ մասամբ լաւ էին, բացառութեամբ մի երկուսի: Ջուր արդենք մնաց մասաւորապէս 250 ռուբլի: Փետրվարի 20-ին թեմական դպրոցի դահլիճում տեղի ունեցաւ վարդապետն ամենի հանդէսը: Նախորդ տարիների նման եղան ճառասացութիւններ, կարդացվեցին բանաստեղծութիւններ, երգեցին երգեր. իսկ խումբը մէջ առ մէջ երգում էր ազգային երգեր:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԵՐՋԻՆ ՏԵՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Բնորոշ են ֆրանսիական ազգային ժողովի մէջ տեղի ունեցած խօսակցութիւնները: Գիւղին Գրքի» երկաւու առիթով: Առաջ ենք բերում հետեւեալ մի տեսարանը: Կօչին «հայկական սարսափներ» մի համառօտ տեսութիւն արաւ:

Կօչին. Ներկայ միջինսոր Հանսօտ միայն մի կարճ ժամանակամիջոց հեռացել էր իր պաշտօնից և ուրեմն նա է կրում պատասխանատուութիւն: Նոյնքան ամսին, Կ. Պօլսի կոտորածներից յետոյ, մենք արինք մեր հարցապնդումը: Բայց արդեօք օգուտ եղաւ: Այո՛, Գիւղին Գրքի» մէջ յաջորդ օրվայ թիւով ես գտայ մի հեռագիր, որ ուղարկել է Հանսօտ ֆրանսիական դեսպան Կամբոնին՝ պատուիրելով հետեւեալը. «Գիւղ պէտք է տեսնվէք առանձնապէս սուլթանի հետ և աւել, թէ ինչ տպաւորութիւններ են գործում պարսկական վրա (հայտարարութիւն) լսվում է ձայնակողման աթոռներից» հայերի վերաբերեալ յայտնագործութիւնները (Ժօրէս ընդհատում է բացառապէս) «յայտնագործութիւններ» Ժիծաղ ծայրահեղ ձայնակողմանների և աջակողմանների աթոռների վրա» Մենք միայն ափսոսում ենք, որ հեռագրի մէջ ասված «թէ այլ ևս չը պէտք է արհեստագործութիւն լինի» խօսքերը չէին ուղարկվել մի ամիս դրանից առաջ (հաւանութեան ձայներ ձայն և աջ կողմերում): Հանսօտ (ընդհատելով Կօչին խօսքերը) Այս բոլորը ապացուցանում է, որ պարսկական աջակողմանները մեծապէս օգնում է կառավարութեան: (Օ՛, օ՛ և աղաղակներ «ամօթ» ձայն և աջ կողմերում):

Կօչին. Ինչպէ՛ք ուրեմն դուք սպասում երկու տարի և յետոյ միայն դիմեցիք մեր օգնութեան: (Երկու կողմերից հաւանութեան ձայներ):

Երգնակայից գրված մի նամակ հետեւեալն է հաղորդում. «Տեղաւոր բանտերում մէջ կան նաև քանի մը պարսկահպատակ հայեր, որոնք այս կողմեր վաճառականութեամբ կը պարապէին.— չը նայելով որ կառավարութիւնը տարի մը առաջ զանոնք ընկեր ու անկող ձանաչած էր, բայց և այնպէս նոքա ցարդ կը տառապայր բանտին մէջ անօգնական և զուրկ ամեն մարդակային հայեցողութեանէ:

Ալկին սոսկալի կոտորածէն վերջ օրը մնացած կանայք, մօտ 400 հոգի, դէպի մեր կողմերը եկան նպաստ խնդրելու և յետոյ կերպով մը կարին, Տրապիզոն անցնելու համար, բայց տեղոյ կառավարութիւնը թղթ չը տուաւ, որ այդ ողորմելիները քաղաք մտնեն. հրամայեց ոստիկանութեան և տեղացի սրկաներուն՝ կրկին իրենց եկած կողմը վերադարձնել զանոնք:—Ինչ պիտի ըլլայ այս թշուառ արարածներուն վախճանը՝ ստիպված ըլլալով ձառնայ կտրել բոկոտն, պատառուտուն հագուստներով, այսպիսի խիստ ձմրան մէջ—անչալտ անխուսափելի և ամենազառն մահ, զորից ամեն ինամըք, հեռու սըրտամօտիկ սիրելիներէ...»:

Թիւրքաց Հայաստանի, վերին Բասէնի Հարսնաբար գիւղից ստացված մի նամակ հաղորդում է հետեւեալը. «Թուրքիայի 18-ին օր ցերեկով գիւղը մոտան 18 զինված զորքեր, պահանջեցին գիւղից 70 լիւրա: Եւ որովհետեւ գիւղի մէջ չէր

կարելի ձարել 70 լիւրա, քրդերը մտան տանուտէր Արաւհամ-Քէլիշեանի տունը, ֆարգեցին պատահած իրերը, տարան ախտից 6 եղ, Տանուտէրի որդին՝ Պետրոսը զէմ կեցաւ ուստի և կորեծագեց: Կուր մէջ սպանեցին երկու գիւղացու: Գրգերը տեսնելով գիւղացոց միաբանվիլը՝ թողին փախան: Գրգերից վիրաւորված են երեքը: Գիւղացիք զանգաւորեցին, քրդերին էլ կը ձանաչեն, բայց կառավարութիւնը ոչինչ չարեց: Քրդերը վրէժ պահեցին և մտադիր են կրակ տալ ամբողջ գիւղը»:

Բօսֆորի ափում նստած «հիւանդ մարդը» լըռիկ-միջիկ իր ծրագրած արհեստագործութեան պրօպագանդային է հետեւում: Ահա թէ ինչ է գրում «С.-Петербургскія Вѣдом.» լրագրի թղթակիցը Ազգասիրտանի Քաբուլ քաղաքից. «Այս քանի օրերը Ջէվանշիր ուխտատեղիից վերադարձած մի ուխտաւոր ներկայացրեց Քաբուլում գտնվող Ուզբէկ մզկիթի մուգարիս Գաուլուլային մի պրօպագանդա, որը որպէս թէ ստացված է թիւրքաց սուլթանից: Ահա նրա բովանդակութիւնը. «Ամենակարող, ամենաողորմած Աստուծու անունից յայտարարում ենք, որ յոյս ենք դրել հզօր մուսուլմանների հարազատ ժառանգներին վրա, այն մուսուլմանների, որոնք փառաւորեցին Սուլթանին և ուրիշ փաղիշահներին. հասել է ժամանակը, որ մենք մեզ պաշտպանենք և ոռոգենք Մահմեդի վերաբերման անհաւատներին արհեստով, որոնք հզօր ոյժը ժամանակ է ոչնչացնել մի սրբազան պատերազմով, որին պիտի մասնակցէ իւրաքանչիւր մուսուլման, ով և լինի նա, ուր որ գտնվի նա»:

Թղթակիցը, լուրերի վրա հիմնվելով, հաղորդում է, որ մի քանի այդպիսի պրօպագանդաներ փորձել են տարածել Հնդկաստանում, բայց որովհետեւ Բօսթէյի վարչութեան ստորին պաշտօնեաները մեծ մասամբ բարեխղճ են, որոնք համակրում են քրիստոնեաներին, ուստի այդ թղթերը աջողութիւն չունեցան: Իսկ Հնդկաստանի միւս նահանգներում, մանաւանդ Բենգալում, ուր մուսուլմանները բազմամիւս են՝ կարելի է սպասել նոր անկարգութիւնների:

Իսկ եւրօպական պետութիւնների ներկայացուցիչները Կ. Պօլսում դեռ խորհրդակցում են... Թիւրքաց կառավարչութիւնները դարձեալ նորոգվում են՝ Եւրօպային մի նոր գուարճութիւն պատճառելու համար «НОВОСТИ» լրագրի թղթակիցը հեռագրում է Պարիզից հետեւեալը. «Gaulois» լրագիրն ասում է, որ իզգէթ-թէ, սուլթանի յանձնարարութեամբ, մշակեց ընդհանուր լեֆօրմներ Թիւրքիայի համար: իզգէթ-թէ, կարծիքով, Թիւրքիայում լեֆօրմներ մշտեցնելու պէս՝ արեւելեան ճգնաժամը կանխեաւ նայա: Երեւելի գլուխ է այդ իզգէթ-թէը:

Անգլիական ամսագիրների յուշակարգի տեսարակների մէջ գտնում ենք յօդուածներ հայերի մասին: «Arenas» ամսագրի մէջ ղեկողված է Գիւղեղեայի յօդուածը «Անգլիայի ձեռքը թիւրքական կոտորածների մէջ» վերնագրով, «Progressive Review» ամսագրի մէջ՝ Ջէմա Անանի յօդուածը «Հայաստանի և անգլիական քաղաքագէտների մասին. «Contemporary Review» ամսագրի մէջ մի յօդուած, հայերի և սիրիացիների կոտորածների մասին:

ՆԱՄԱԿ ՊԱՐՏԱՄԱՆՆԵՐ

ԹԱՐԻՂ, ԳԵՐԱՐԱՐԻ 8-ԻՆ

Երկու չաբաթից աւելի է, ինչ որ թուրքերը սկսել են իրենց օրուրը (ծովապահութիւնը), այս ծովը պահում են 30 օր, որից յետոյ դալիս է մահմետականների Նովրուզը, նոր տարին: Խօսելով օրուրի մասին, չէ կարելի չը նկատել, որ այս ծովը փոխանակ նրանց մեղքերից ազատելու, ընդհակառակը աւելի ևս վնասում է նրանց: Գիտար է երևակայել, թէ զիշերները երբ թնդանօթի որոտումից յետոյ նրանք սկսում են ծովը բաց անել, ինչպիսի չապլութիւններ են անում: Ամբողջ օրը ծով պահելուց յետոյ ողջ գիւղերը նրանք սկսում են ուտել բազմա-տեսակ ամենաքնքիւր և ամենաքաւր ուտելիքներ և խմում են փառաւոր կերպով մինչև առաւօտ, իսկ լուսաբացին, երբ թնդանօթը երկրորդ անգամ որոտում է, նրանք զաղարում են «փորնե-րին դուրսը» անկուց և մինչև գիշեր այլ ես ոչ

